

4846

ԴՏ պատմաբաններ

Անուշի Խճագործ

ԹԻԲԼԻՍ

1894

05

Վ-30

05

4-30

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

173

ՄՈՒՐՃԻ ԽՄԲԱԳՐԻՆ

1007
2 3273

Tu l'as voulu, George Dandin.
(Ինքդ կամեցար, պարոն Ժորժ)

Ամենահասարակ գրողը երևակայում է իւր անձը
ամենից բարձր կանգնած: Սնտիառութիւնը և
Նախանձը կլանում են նրա բոլոր մտաւոր ըն-
դունակութիւնները:

Մոնտեզացցա:


92 [ԱՐԱՍԽԱՆՅԱՆ]
4-30

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռոտինիանցի

Типография М. Д. Ротинианца, на Гол. пр., д. № 41.
1894

2019



ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՄՈՒՐՃԻ ԽՄԲԱԳՐԻՆ*

Tu l'as voulu, George Dandin.

(Ինքդ կամեցար, պարոն Ժորժ)

Ամենահասարակ գրողը երևակալում է իւր անձը
ամենից բարձր կանգնած: Մեղադրութիւնը և
նախանձը կլանում են նրա բոլոր մտաւոր ըն-
դունակութիւնները: Մահափառացի:

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Мая, 1894 г.

Մարդու համար չըկալ աւելի ծանր և անախորժ մի գործ քան հը-
րապարակով խօսելը իւր անձի մասին: Բայց մարդ երբեմն, ինչպէս ալժմ
ես, ստիպուած է խղել ալդ լուծիւնը գէթ ինքապաշտպանութեան հա-
մար:

Հալոց հասարակութիւնը արդէն ծանօթ է իմ և «Մուրճ»-ի խմբագրի
Մշակում ունեցած բանակոււին: պ. Արասխանեանցը ճգնում էր ինձ ցոյց
տալ պալմանադրութ և պարտազանց, սովիստութիւններով հաւատացնե-
լով, թէ ես, երբեք Մուրճի հրատարակիչ—իւր հոտարական ընկեր, ժա-
մանակից առաջ պալմանը քանդել—հեռացել եմ առանց իրաճ բաւարա-
րութիւն տալու և որ ինքը ալժմ անապահով դրութեան մէջ է:

Երկար պատեպատ ընկնելուց յետոյ վերջապէս իւր Մուրճի ալս տա-
րուալ № 2-ում «մի ընկերութեան սկիզբն ու վախճանը» վերնագրով լոգ-
ւածում պարոնը հագիւ խոստովանեց, որ ինձանից բաւարարութիւն է
ստացել հեռանալիս: Բայց իւր ալս ակամալ խոստովանքին կցեց նոր հը-
րէշաւոր մեղադրանքներ, որոնք ածականներ.—ալժմ արդէն ոչ թէ միայն
պալմանադրութ և պարտազանց, ալժմ անբարեխիղճ, աներես, խարդախ,
աչքակապ, ստախոս և ալժն, և ալժն:

Եւ ինչու համար?

Որովհետեւ. . . .

*) Մշակ 1894. № 25. Մուրճ № 2. էջ 291—307:

Որովհետեւ, ինչպէս գրում է մինչեւ անգամ ինքը—պ. Արասխանեանցը, 1891 թ. Մուրճի խմբագրի գրամական մեծ տաղնապի ժամանակ, երբ նա ընկել էր պարտքերի տակ, որոնց գիմաց կոպէկ չունէր, երբ ուրիշ եւք չըկար, խմբագիրը ղիմել էր փոխառութեան երկու գրամատէրերի և նրանք էլ մերժելով փակել էին ալդ միակ եւքը—ալդ ժամանակ տեղեկանալով նրա դրութեան մասին եւ մօտեցալ նրան: (Մուրճ էջ 291)

Այո՛, ճշմարիտ է ասում պ. Արասխանեանցը—եւ մօտեցալ նրան իւր մեծ տաղնապի ժամանակ:

Թէ ինչո՞ւ համար, ինչ զգացմունքով և դիտաւորութեամբ եւ մօտեցալ ալդ անդունդի գլխին կանգնած ամսագրին և նրա միակ մնացած—անօգնական խմբագրին, երբ նա բացի նիւթական մեծ տաղնապը նոյնպէս բարոյական մեծ տաղնապի մէջ էր—հալոց մամուլի ծաղրին և հալ հասարակութեան արհամարանքին ենթակալ լինելով, ալդ հիմա տեսնենք. տեսնենք որքան արժանի եմ եւ իմ ալդ քալի համար աչն ածականենք. ընդ, որ ստացել եմ նոյն Մուրճի մէջ նոյն խմբագրից:

Այստեղ ձեզ եմ դառնում պ. Արասխանեանց. համեցէք հանրածառօթ դարձնենք աչն իրողութիւնները, որոնք, որպէս պարծենալով գրում էք, ձեզ միայն պատիւ կը բերեն:

Տեսնենք:

Սկսենք գրամականից:

1, Դուք, պ. Արասխանեանց, հազիւ խոստովանելով, որ ինձանից բաւարարութիւն էք ստացել, ալժմ էլ ձեր ձաչնը փոխում, ասում էք թէ ձեր պահանջածը չըտուցի (էջ 301, 302, 304, 307), իսկ ինչոր տեղի աչն բաւարարութիւնն չէք համարում. (էջ 302):

Դուք ինչ էիք պահանջում:

Դուք պահանջում էիք, եթէ միայն ձեր գրածը ասեմ, 1500 ր. կանխիկ փող և 1200 ր. Մուրճեր ինձանից:

Բայց ինչո՞ւ էիք աւքան պահանջում ինձանից, եթէ, որպէս հաւատացնում էք ձեր ընթերցողներին, Մուրճի 1894 թ. դէֆիցիտն էիք միայն պահանջում: Զէ որ 1894 դէֆիցիտը, որպէս ցուց տւիք մեր բաժանման վկաներին, 700 ր. էր, և եւ մեր նօտարական պալմանով պարտաւոր էի ծածկել միմիայն դէֆիցիտը, ալսինքն տալ 700 ր. 94 թ. համար:

Ուրեմն եւ ձեզ բաժանուելիս պէտք է տալի 700 ր., եթէ դուք ինձանից միայն ալդ պահանջէիք—և ոչ աւելորդ տուգանք թէ փրկանք—չը գիտեմ. իսկ եւ ոորա փոխանակ ձեզ տւել եմ ձեր գնահատութեամբ 1200 ր. Մուրճեր, որ ինձ էին պատկանում և զեղջել եմ ձեր ինձ տալիք պարտքից 1500 ր., որ անում է 2700 ր. և դուք ալս բաւարարութիւնն չէք համարում:

Մի հարցնող լինի, հապա եթէ բաւարարութիւնն չէիք համարում ինչո՞ւ ընդունեցիք. չեմ ուզում—Չիբս դի՛ր, հը...:

Բայց եւ ձեզ հետ կըհամաձայնեմ, պ. Արասխանեանց, եւ էլ կասեմ, որ դուք ոչինչ չէք ստացել, որ իմ տւածը բաւարարութիւնն չի,—միայն սրա համար նախ և առաջ դուք պէտք է խոստովանէք, որ դուք ձեր պարտքը պարտք չէք համարում և ձեր գնահատած, պահանջած և վերցրած 1200 ր. Մուրճերը գոջ չարժեն:

2, Դուք այստեղ բողոքում էք, թէ եւ ձեր պահանջածը չըտուցի, և չեմոյ գրում «եւ ընդունեցի ալդ (1500 ր. պարտքից զեղջելը և 1200 ր. Մուրճերը) բայց ոչ իբրեւ բաւարարութիւն, որովհետեւ եւ վըճուել էի ազատուել նրանից նաև առանց կոպէկ պահանջելու» (էջ 302):

Սրան էլ պատասխանեմ...

Միթէ սրան էլ պէտք է պատասխանել!

Գոնէ ամաչեցէք սրանից մի քանի տող վերև ձեր գրածից թէ երբ «եւ չալտնեց, թէ չի ընդունում իմ առաջարկը (պահանջը) աչնժամանակ *» եւ չալտարեցի ամենքի ներկայութեամբ տւէք ինձ Մուրճերը: Թէ կուզէնց ալսպէս լինէր: Ասենք թէ նոյնիսկ աչն ժամանակ, երբ որ ձեր պահանջը եւ չեմ ընդունում, դուք միմիայն Մուրճերն էք պահանջում ինձանից: Բայց չէ՞ որ ձեք պահանջած Մուրճերն իմ սեփականութիւնն էին, և չէ՞ որ նոյն իսկ ձեր գնահատութեամբ արժէին 1200 ր.,—ալս կընչաւակի վճուել էիք ինձանից կոպէկ չը պահանջել:

Ի՞նչ բանից երևաց ձեր կոպէկ չը պահանջելու վճիռը:

Նրանից, որ չարունակ 1500 ր. էիք պահանջում?...:

Գուցէ նրանից, որ վկաների ժողովի նախընթաց երեկոյեան ձեր կրկու աշխատակիցների՝ պ. պ. Թառախեանցի և Թումանեանցի մօտ (որոնք զեւ անտեղեակ էին գործին) կոմբինացիաներ էիք անում ինձանից 5,000—7,000 ր. կորզելու?

Թէ նրանից, որ ստացաք պրծաք 2700 ր. բաւարարութիւնը, որը ալժմ մինչև անգամ բաւարարութիւնն չէք համարում!...

Թէ եւ զարմանալի չանդգնութեամբ հրապարակաւ առատ տներ էք խօսում, բայց ազատութեան մէջ էլ եւ չէք մնում, պ. դօքտօր:

3, Դուք գրում էք. «եւ վճուել էի ազատուել նրանից» (էջ 302):

Ալդ երբ էիք վճուել, ամօթ չը լինի հարցնել: Դուք ինչ էիք վճուել, երբ որ եւ 1893 թ. Հոկտեմբերի 14-ին ձեզ գրեցի. «բաւական էր պ. Արասխանեանց, որ քան չարչարուեցի ձեք ձեռքին, ուզում եմ ձեզանից հեռանալ» և ստորագրելի «Ձեր նախկին բարեկամ»:

Ալս «աչն ժամանակ» ի համար տես չօդ. 10:

Այդ իմ նամակի մասին դուք այսպէս էք գրում. «նրա այդ զարմանալի տողերը ես տրամադիր էի այսպէս թարգմանելու. որովհետեւ ես, Վարդապետականաց, շարունակ ձեր զանգէն կը տանեմ, այդ պատճառով իմ պէս անգարմար ընկերից ազատուելու համար տուգանք վճարեցէք, որ ես ռադ լինեմ» (էջ 301).

Ոչինչ, լաւ էք թարգմանել,—բաւականին սագում է ձեր տրամաբանութեանն ու ձեր հոգուն:

Բայց, ասացէք խնդրեմ, պ. թարգմանիչ, հապա ես ի՞նչպէս թարգմանեմ Հոկտ. 15 ձեր ահա նամակը, որով պատասխանել էք վերոյիշեալ տողերիս, զարմանք չալտնելով «անսպասելի առաջարկութեանս» (ուրեմն իսկի չէիք էլ սպասում...) համար, տակն ստորագրել էք «ձեր բարեկամ եմ եղել որպէս և տրամադիր եմ մնալու, Աւետիք Արասխանեանց»։ Խնդրեմ ճշգրտութիւն կրեցէք այս էլ թարգմանեցէք, որ իրար ընկնի ձեր ասածի հետ—թէ՛ դուք էիք վճռել ինձանից հեռանալ—ազատուել,—կամ ձեր խմբագրական լեզուով ասենք՝ ռադ լինեմ:

Թողնում եմ մնացած փաստերը ձեր ինձ բարեկամ մնալու ցանկութեան. —միայն սրան պատասխանեցէք:

4, Բայց իմ նամակը դուք միայն չէք թարգմանել, մի ուրիշ աւելի վատ բան էլ էք արել: Նրանից հանել էք միայն չորս տող այսպիսի բացատրութեամբ՝ «ես անգարմար եմ գտնում ալդ նամակը ամբողջապէս առաջ բերելը, բայց միայն մի բան չի կարելի չըլիւնել. այդ ահա է որ նա, պաշտօնաժամից առաջ հեռանալու համար, ոչ միայն դիտաւորութիւնն էի չալտնում ինձ բաւարարութիւն տալու...» (էջ 300)

Նւ դարձեալ կրկնում էք:

«Մի՛ք մոռանալ, որ այդ մարդը, որ բաժանման առաջարկութիւն անելիս ոչ միայն միտք չի ունեցել որեւէ բաւարարութիւն տալու ինձ» (էջ 301)

Այո՛, պ. դօքտօր, անգարմար գտնելով ամբողջապէս իմ նամակը առաջ բերելը, լաւ չարմարութիւնն էք ստեղծել այսպիսի անասունած ստով աշխարհք խաբելու:

Բայց ես պահանջում եմ—տպեցէք իմ նամակը ամբողջապէս, որ հասարակութիւնը կարգաւ նորա մէջ գրած այս տողերը «պ. Արասխանեանց... ի՞նչ պաշտօններով կը համաձայնի ինձ ազատել թէ վաչեւած իրաւունքներիցս և թէ չանձն առած պարտաւորութիւններիցս, որպէս Մուրճի հրատարակչի... Եթէ ձեր պաշտօնները ընդունելի եղան ես կընդունեմ և մենք կը բաժանուենք պաշտօնաժամից մի տարի առաջ, բայց եթէ ձեր պաշտօնները ծանր եղան ինձ համար, ես ստիպուած կը լինեմ մի տարի էլ մնալ որպէս հրատարակիչ ընկեր»:

Տպեցէ՛ք իմ այս տողերը, որ հասարակութիւնն էլ չարմարութիւն ունենալ ձեզ ճանաչելու և դատելու:

5, Ինչ վերաբերում է ձեր հաճած չորս տողին, որի վրայ դուք հրաւիրում էք աշխարհք զարմանալ—բացատրեմ: Ահա այդ տողերը. «Ինչ ասել կուզի, որ 20,000 ռուբլու տուգանքի մասին ինձանից չօգուտ ձեր խօսք անգամ չի կարող լինի, տղ գուցէ ընդհակառակը—իմ օգտին լինի ձեզանից» (էջ 301)

20,000 ռ. տուգանքի մասին—ինձանից ձեր օգտին խօսք անգամ չի լինիլ—գրել եմ որովհետեւ չեմ քանդել մեր պաշտօնագրի ոչ մի կէտը, իսկ ձեզանից իմ օգտին գրել եմ, որովհետեւ դուք քանդել էք այդ կէտերից մէկը ահա թէ ինչպէս.—

Մեր պաշտօնագրում ես միայն երկու իրաւունք ունէի, որոնց խախտելու համար էլ դուք պետք է տուգանք տալիք: Գրանցից մէկն էր Մուրճում տպելիք չօգուտներին վաղօրօք ծանօթանալու իրաւունքը: 1893 թ. Ձ 9-ը լուս տեսնելուց մի քանի օր առաջ ես ձեզ գրում եմ.—«պ. Արասխանեանց,—չեմ մոռնում խմբագրատունը ձեզ չըխանգարելու համար *» Խնդրեմ չալտնէք ինձ, որպէս Մուրճի հրատարակչի ե՞րբ է լուս տեսնելու Ձ 9 և ի՞նչ բովանդակութեամբ»:

Գուք ինձ պատասխանեցիք՝ «կարծեմ չաբաթ օրը»: Գուք ինձ բաւականութիւն չըտուիք, չըլալտնեցիք Մուրճի բովանդակութիւնը, արհամարեցիք իմ իրաւունքս, հետեաբար ես կարող էի գուցէ ով լիչել տուգանքի մասին:

Գուք կարող էք ասել՝ —այդպիսի չնչին բանի համար մի՞թէ կարելի է...—Ի՞նչ անեմ որ այդ էր իմ իրաւունքս, կպատասխանեմ ես

Բայց խօսմ ձեզանից տուգանք չառա՞յ, փառք Աստուծոյ:

Ահա որտե՛ղ էր հարկաւոր ձեր թարգմանական տաղանդը, որ դուք թագցրել էք և ձեզ չըհասկանալը դնելով ուրիշներին էլ խնդրում էք որ զարմանան:

6, Գուք գրում էք. Վարդապետականը հեռացաւ չահելու և պատակով, այսինքն չըկրելու համար ահա միասը, որը կարող էր կրել, եթէ ըստ պաշտօնի ընկեր մնար ինձ մի տարի ես» (էջ 305):

Ուղիղն ասած, ձեզ մօտենալուց չետոյ ձեզանից հեռանալը չա՛հ է: Բայց դուք 94 թւականի մասին էք խօսում,—այդ էլ ասեմ:

Իմ շահը, ձեր ասելով նրա մէջն է, որ չըկրեցի 94 թ. Մուրճի վընասը: Այդ միասը 700 ռ. էր. չէ՞:

Բայց չէ՞ որ ես 2700 ռուբլուց զրկեցի հեռանալու համար.—ձեր կարծիքով ա՞յս է շահը

Ես կարող էի մի տարի էլ մնալ հրատարակիչ, 700 ռ. միաս կրել, բայց դրա փոխարէնը 1500 ռ. պարտքը չէի զեղձիլ, 1200 ռուբլու Մուրճում

*» Որովհետեւ դուք շարունակ ահա էիք գանդատում, որ ես խմբագրատուն եմ գալիս ձեզ խանգարում (էջ 300) եալին:

ձերս չէի տալ ձեզ, և դեռ 94 թ. աւելորդ Մուրճերն էլ ինձ կ'մնային: Սա-
կայն ես այս չարեցի. կընչանակի շահեցի՞ր...:

Գուրբ մի ուրիշ նպատակ էլ էք դնում իմ հեռանալու մէջ. գրում
էք թէ «իմ պահանջածը նա չուզեց տալ. չէ՞ որ հակառակ ուղիս
նպատակն է եղել զգալ տալ իմ անապահովութիւնը որ ես ոտիպուած լի-
նեմ համաձայնել նոր պալատան կապելու» (էջ 307):

Ուրեմն, պ. խմբագիր, ձեր կարծիքով ո՞րն էր իմ նպատակը—հեռա-
նալ շահելու համար, թէ նոր պալատն կապել տալ??

7, Նո՛ր պալատն պ. Արասխանեանցի հետ... ո՛չ, պ. Արասխանեանց,
ես ձեզ հետ միանգամ արդէն պալատն եմ կապել, թող հիմի ուրիշները
կապեն, կամ ձեր խօսքով «արժանանան ձեր ընկերը կոչւելու»
(էջ 304) թէև իմ թշնամիներին անիծելիս էլ չեմ ցանկանալ աչք:

Եւ մի՞թէ իմ ձեզ գրած նամակի մի որևէ բառից կամ տառից այդ-
պիսի մի բան է երևում, այն նամակի, որի մէջ գրել եմ «բաւական էր,
որքան չարչարւեցի ձեր ձեռքին, ուղղում եմ հեռանալ
եթէ դարձեալ ձեզ հետ մնամ—կը խելագարւեմ»:

Բայց դուք, որ այդքան ախորժում էք հաւատացնելու, թէ ես կու-
զենայի նորից «արժանանալ ձեր ընկերը լինել», նոր պալատն կապել,
բարեհաճեցէք լսել, թէ ինչ պէս էք հիմն պալատնը կապել ինձ հետ:

1891 թ. Յուլիսին, երբ որ ուղում էինք մենք պալատն կապել,
պալատնը կապելուց առաջ դուք ինձ ներկայացրիք Մուրճի հաշիւնե-
րը: Այդ հաշիւառութեան մասին այսպէս էք գրում.

«Եւ ես ահա վիշոգութեամբ լացոնում եմ և մատաղ ու մի թղթի կը-
տորի վրայ գրում մի թիւ, եթէ չեմ սխալում 287 բաժանորդ... և ծախք
ինչ ո՞ր 3000 ռուբլի» (էջ 292)

Բարեբաղդաբար այդ թղթի կտորը կամ ինչպէս այդ թղթի կտո-
րի մասին ինձ գրել էք 1891 Յուլիսի 17-ի նամակում—այդ ձեր տւած
գրաւոր երաշխաւորութիւնը Մուրճի ել ու մուտքի մա-
սին, տակաւին մօտ է, և նրանից երեւում է որ մի փոքր սխալւում էք:

Ահա թէ ինչ է գրած նրա վերայ:

297 բաժանորդից մուտք. . . . 2780 ռ.

Ծախք. 2580 ռ.

Այս 2580 ռ. ծախքը վերին ինչ ո՞ր 3000 ռուբլին է, իսկ 297 (այս-
ինքն 285) բաժանորդի մէջ հաշւած են 6 ռուբլիանոց աշխատակից և 8
ռուբլիանոց ուսանող և ուսուցիչ բաժանորդները: Արանից երեւում էր, որ
դուք 91 թ. ունեցել էք օգուտ 200 ռուբլի + Մուրճի աւելորդ մնացած
օրինակները 500 ռ. արժողութեամբ:

Բայց ընդունենք, որ դուք իսկի օգուտ չէք ունեցել և փշեալ 700 ռ.
օգուտը համարենք զրո: Ընդունենք մուտքը ելքին հաւասար և հաշւենք:

1892 թ. աւանդից ես ձեզ պէտք է ռոճիկ տալի տարեկան 1500 ռ.
և եթէ Մուրճի ելքն ու մուտքը ծածկում են իրար, իմ փաստը լինելու էր
տարեկան 1500 ռուբլի: Հետևաբար, երեք տարուամբ, եթէ մուտքը չաւելա-
նար, աչխնքն՝ չաւելանար ոչ մի բաժանորդ, ես կ'ունենայի փաստ
4500 ռ. և աչք կ'ըլիս էր անլաջող դէպք:

Բայց որովհետեւ, որպէս դուք ասել էք և գրել, «խելացի է սպասել
ամեն տարի 50 նոր բաժանորդ» և որովհետեւ աչք խելացի ակնկալութիւ-
նը իրագործել է, աչխնքն բաժանորդները աւելացել են տարեկան 50-ի
չափ, շնորհիւ իմ հաստատած գործակալութիւնների, ուրեմն իմ փաստը
պէտք է լինէր շատ աւելի պակաս. այն ինչ, որպէս դուք քաջ գի-
տէք, իմ փաստը անլաջող դէպքի 4500 ռուբլուց էլ աւելի շատ եղաւ:

Ինչից պատահեց այս?—Ձե՞ որ Մուրճը տալում էր նորն ծաւալով, չէ՞
որ թուղթը կանխիկ փողի շնորհիւ աւելի արժան էր նստում, չէ՞ որ իմ
և իմ բարեկամների աշխատակցութիւնն էլ չէր վարձատրւում???

Այս ի՞նչից է պատահել, որ մեծ է դուրս եկել իմ փաստը:

Ես էլ նոր եմ իմանում ինչից է պատահել... որովհետեւ դուք, պ.
Արասխանեանց, նոր էք շտապում ընթերցողներին ասելու որ ձեր
ինձ ցուց տւած հաշիւը ճիշտ չի եղել, որ ձեր ինձ ներկայացրած հաշւի
մուտքը մուտք չի եղել:

1891 թ. Յուլիսին պալատն կապելու համար ինձ հաշիւ էք տւել,
բոլոր բաժանորդները (297) ցուց էք տւել կանխիկ և միմիայն աչք
1894 թ. էք շտապում ասել փակագծում («պատեղ և եթ շտա-
պում եմ (ինչ էք շտապում, հէր օխնած) ասել, որ տուն վերադառնալիս
(մինչև անգամ ոչ թէ տուն հասնելուց չետու, աչխնքն անգիր էլ գիտե-
իք) հաշւեցի որ Մուրճը ուղարկւում էր 307 հոգու, որոնցից 22 անվճար,
իսկ մնացած 285 հոգու վճարով՝ կանխիկ և ապառիկ միասին») (էջ 292):

Եթէ որ նեղութիւն էք կրել այսպէս շտապել երեք տարուց
չետու ասել, որ ապառիկ բաժանորդներ ունէիք—այն էլ կասէիք միանգա-
մից—թէ ո՞րքան էր նրանց թիւը, և կանխիկ ու խսկական մուտքը,
որ ինձ ցուց էք տւել 2780 ռուբլի, ո՞րքան է եղել:

Գուրբ նոր էք շտապում լացոնելու որ ապառիկները ինձ կան-
խիկ մուտք էք ցուց տւել:

Ահա, հէնց այդ ձեր շուտ շտապելուցն է իմ փաստը մեծ դուրս եկել,
լարգելի պարոն: (Աւելորդ եմ համարում այստեղ ցուց տալու թէ ինչպէս է
կազմել ամբողջ փաստի դումարը:)

8, Բայց ձեր մեղքը թեթեւանում է, երբոր մարդ նկատում է, որ
դուք մէկին խաբելիս, սուտ խօսալիս, չէք զգում, չէք հասկանում ձեր ա-
րածը, թէ չէ ալլապէս ինչպէս մի տեղ կըգրէիք այսպէս՝ «ղաջնակիցս դա-

լիս էր միայն ամենավատ դէպքում փողով ինձ օգնելու, իսկ չափող դէպքում ոչ ինչ չըրցանած ինձ հետ նսնի իսկ արդիւնք բաժանելու առ միշտ» (էջ 297)

Ի՞նչպէս թէ, չափող դէպքում ոչինչ չըրցանած!...

Բաս անչափող դէպքում որ օգնելեմ—աչն ինչ կընշանակի?... ցանկըն ուրիշ ո՞նց է լինում...

Ձեզ հաւատացնում եմ, ոչ մի առատ սերմնացան ինձ նման չէր ցանիլ, բայց բանն աչն է, որ ես ապառաժի վրայ եմ ցանել:

Այսպէս, դուք հաւատացնում էք որ ձեզ հետ արդիւնք էի գալիս բաժանելու (Ատոռած չէն պահի ձեր օջախը). իսկ մի ուրիշ տեղ այդ վարդապետն ինքի դէմ երկիւղ չապրեցելով գրում էք՝ «մտածում էի, թերեւ դեր է խաղում մի ալլ հաշիւ, աչն է, որ նա (եւ) հաստատ հաւատում է հակառակ եմ ցուց տւած թւերին (սփսոս, որ հաւատացել եմ ձեր ցուց տւած թւերին), որ Մուրճը դէֆիցիտներ չի ունենալու... իմ աչս վերջին եմ թաղորոթիւնն ինձ անհանգստացրեց, եթէ ինձ հետ դաշնակցել ցանկացողս՝ ալլալիսի՝ չոչս եւ տաժոռւմ՝ նա ապագայում կարող է հիասթափուել» (ի գիտութիւն ապագայ ցանկացողներին!) (էջ 295):

Հիմալ հարցնենք, աչս ինչպէս է՝ համ ինձ վերալ մոռնալ թէք բարձում, որ ձեզ հետ արդիւնք էի բաժանելու ոչինչ չըրցանած, համ էլ մտատանջովում էք, չըլինի թէ ես ալլալիսի չոչս ունենամ... կը հիասթափուեմ ապագայում:

Ձեր ո՞ր ասածին հաւատանք...

9, Դուք գրում էք՝ «Մշակի № 18-ում նա ի լուր ամենքին չապրեց, թէ նա էր միակ չանձն առել հոգալ թղթի, տպարանի, բռնիկների և ալլ ծախքերի մասին: Բայց դա ոչ ալլ ինչ է, եթէ ոչ աչքակապութիւն. նա իրան չըզիտեմալ է ձեռնուած, որ ես Մուրճի ամբողջ եկամուտը չատկացրել եմ ալլ նոն ծախքերին, աչն Մուրճի, որը առանց վարդապետանցի էլ ունէր մի չապրի եկամուտ բաժանորդաւճարներից դաւանող, որը կարող էր աճել և բոլոր ծախքերը ծածկել: Եւ ինչ կունենար հոգալու նա, եթէ Մուրճն ինքն իրա ծախքերը ծածկէր?» (էջ 298)

Եթէ Մուրճն ինքն իրա ծախքը ծածկէ՛ր... եթէ... հա, հա, հա, հա, եթէ ծածկէ՛ր...

Երեի աչս եթէ՛նքն եւն ձեր խոտացած իրողութիւնները, որոնց հանրածանօթ գարձելը ձեզ պատիւ էք համարում:

Ո՛չ, եթէները իրողութիւն չեն, պ. Արասխանեանց, եկէք իրողութիւնից խօսենք, որ ձեր պատիւը բարձրանալ:

Ցուց տւէք ինձ, Մշակի № 18-ում ես որտեղ եմ գրել թէ ես միակ էի չանձն առել ծախքերը, առանց եկամուտը հաշուելու, ցուց տը-

ւէք ինձ ալլ միակը, որի տակն էլ գիծ էք քաշել:

Հապա ի՞նչ եւն նշանակում Մշակի № 18-ում տպած իմ աչս խօսքերը «ինձ վրալ առնելով ամբողջ դէֆիցիտը, որը ակներե էր, իսկ օգուտը կիսել իմ հրատարակչական ընկերոջ հետ»?

Աչս տեղից միթէ երևում է, որ ես ուրացել եմ Մուրճի եկամուտը Դուք խօսք քաղաքատեսն էք. ինչ է նշանակում դէֆիցիտ, վնաս բառը? Աչս կնշանակի մուտքի և ծախքի զանազանութիւն,—ծախքի, որ էս էի անում, մուտքի որ բաժանորդաւճարներից էր գոյանում: Եթէ ես ուրացել եմ Մուրճի եկամուտը—էլ ինչ եւն նշանակում իմ գրած դէֆիցիտ և օգուտ բառերը?

Թէ դուք չէք տեսել աչս բառերը... թէ չէք հասկացել... թէ աչս տեղ էլ էք ուղեցել ձեզ համար չարմարութիւն ստեղծել?... Ի՞նչ է աչս, ձեր լեզուլ հարցնեմ, անընդունակութիւն մի խնդրի էութիւնն ըմբռնելու թէ զիտաւորեալ խարդախութիւն??: (էջ 298)

Եւ դուք, իմ չգրած միակ բառը ինձ վերադրելով, իմ գրած՝ «դէֆիցիտ և օգուտ» բառերը թաղցնելուց լետու, ձեզ համար չարմարութիւն էք ստեղծում ինձ անուանելու «աչքակապ, զիտաւորեալ խարդախ»!

Դրամականի մասին աչքան: Շրջենք դրամի միւս երեսը և դրամականից անցնենք դրամաչականին և կոմիկականին:

10, Դուք գրում էք իբրեւ թէ ես ձեզ, պ. Արասխանեանց, խանդարում էի իմ «խորհուրդներով, ծառայութիւններով, առաջարկութիւններով, արիւնխառնութիւն պատճառում» խլելով ձեզանից օրեկան չորս հինգ (պա՛հ է) թանգագին ժամեր» (էջ 300):

Ալլ բառերը, պ. Արասխանեանց, ես ձեր բերանից շատ ու շատ անգամ եմ լսել! Հիմա նոն բառերը գրում էլ էք և տպում!

Համեցէք պատասխանեմ:

Կարդացէք մեր նախկին նոտարական պալմանագիրը: Աչստեղ ասւած է որ Մուրճի խմբագրական գրասենեակի, աչսինքն կօնտորալի վարձելը Արասխանեանցի հաշին է և որ սակաչն ալլ խմբագրական գրասենեակ կոչւած բանը կարող է նաեւ խմբագրի բնակարանում գտնուել:

Ուրեմն դուք պ. Արասխանեանց անպատճառ պարտաւոր էիք ունենալ խմբագրական գրասենեակ: Ձէ?

Եւ եթէ ես ամեն օր գալիս էի ձեզ մօտ—խօսմ հիւր չէի գալիս, ոչ էլ խանդարելու խմբագրին որ մեծ մեծ մտքեր չարծարծի,—ալլ գալիս էի ձեզ մօտ—խմբագրատան գրասենեակը՝ որպէս Մուրճի պաշտօնական հրատարակիչ, որպէս Մուրճի հրատարակութեան ձեր ընկերակիցը, գալիս էի որպէս գանձապահ, որպէս էքսպեդիտոր: Եւ եթէ ալլ գրասենեակը գտնուում էր ձեր բնակարանում—միթէ պարզ չէ որ դարձեալ Մուրճի խմբագրատան գրասենեակն էր և ես իրաւունք ունէի մտնելու և մինչև

անգամ, եթէ կուգէք, կարող էի մէկին աչնտեղ նստացնել ու ձեզ հաւատալ փողերի ստանալը!

Այս հանգամանքը թագցնում էք ու հաւատացնում թէ ձեզ խանգարում էի!

Խեղճ խմբագիր, որից իւր հրատարակչական ընկերակիցը խլում է օրեկան 4—5 թանգագիրն ժամեր և արիւնխառնութիւն պատճառով! !

Մասխարութիւն միք անիլ պ. խմբագիր.—եթէ իրաւ ալիքան թանգագիրն էին ձեր ժամերը և տրտնջում էք որ ես խլում էի ձեր ժամանակը իմ առաջարկութիւններով, որոնք վերաբերում էին ամսագրին,—ապա ինչպէս էր որ ալիք թանգագիրն ժամերը գործ էիք դնում գրեթէ ամեն օր ձեր աչն ինքնակենսագրական դաւթարի վերայ, գրում էիք ու հաշւում թէ ձեր կեանքում քանի տող և քանի տառ էք գրել, քանի հալերէն բառ էք հնարել, քանի անգամ է գնադան թերթերում գրել՝ Արասխանեանց և ամեն օր հաշւում թէ անցել է արդեօք չորս հազարից թէ չէ!

Ապա ինչպէս էր որ ժամանակ էիք գտնում (թանգագիրն ժամանակ!) օրը երբեմն մի քանի անգամ չափւելու ձեր մի բարձրահասակ աշխատակցի հետ, վկայ և ապացոյց ձեր սենեակի անկիւնների գծերը և ձեր առատազրից քաշարած անխօս լամպան:

Բայց չէ, մի ուրիշ գաղտնիք կա. ձեզ կատաղեցնում էր աչն որ Մուրճի խմբագրատուն մտնողը տեսնում էր, ծանօթանում և դիմում նաև հրատարակչին,—ձեզ կատաղեցնում էր որ աշխատակիցները բարեկամական չարաբերութիւնների մէջ էին մտնում ինձ հետ: Դուք այս չէիք կարողանում տանել և մինչև անգամ ինձ արգելում էիք աշխատակիցներին կարիք եղած ժամանակը իմ փողով օգնելու կանխավճարներով, որպէս օգնում էի ձեզ: Այս բոլորի մէջ դուք ձեր անձնական հաշիւները ունէիք և եթէ ձեր աշխատակիցները խօսան չատ բան կասեն աչ մասին:

11, Դուք, պ. Արասխանեանց, չատ էք ապշում որ ես խմբագրի օգնական և նույն իսկ խմբագիր եմ ուղեցել դառնալ:

Իդուր էք դարմանում, ես առաջարկեցի դուք էլ մերժեցէք:

Բայց գուցէ մոռացել էք թէ ինչու ձեզ առաջարկեցի որ ինձ զիջանէք Մուրճի խմբագրութիւնը և հրատարակչութիւնը ինքեքեղ միալով գլխաւոր աշխատակից և խորհրդատու:

Ես աչս առաջարկելիս մտածում էի ամսագրի մասին: Որովհետեւ աչն ժամանակ (1891 թ.) Մուրճի խմբագիրը—դուք, սպարոն, ծաղրանքի և արհամարանքի առարկայ էիք դարձած նույն իսկ առաջագէտ և արհամարանքի թեան մէջ, որին չարած էիք: Լուսահողի Գ. Արծրուկունի ձեզ «Մշակում» մկրտել էր «կլոուն», ի դիօտ, և ալ ածականներ:

րով, իսկ ալ տիտղոսներով ամսագիրը չէր կարողանում առաջ գնալ չարք ստանալ հասարակութեան մէջ: Ահա թէ ինչու ես պնդում էի, որ պէտք է Մուրճի վրայ դնել մի ուրիշ անուն:

Ես կրկին Մուրճի մասին էի հոգում և աչն ժամանակ—բաժանվելուց չետու—93 թ. հոկտեմբերին, երբ առաջարկեցի թէ կը դառնամ նորից հրատարակիչ միաչն աչն պայմանով, որ Մուրճը ունենալ խմբագրական մասնատողով ձաչն երի իրաւունքով: Սրա համար դուք ձեր «սիրելի» օրգանում (էջ 307) ինձ աներես էք անւանում: Սակաչն այս «աներես» առաջարկը ես արեցի, նախ, որ մեր գրական բարեկամները ինձ թախանձում էին չընեռնալ և Մուրճը չը թողնել, երկրորդ, նրա համար, որ դուք լսելով թէ ես նոր բան եմ հրատարակելու, բացատրել էիք թշնամութեամբ: Մուրճի դէմ և ալ անազնիւ դիտաւորութիւններով:

12, Բայց ձեր հասկացողութեամբ ինչ բան է խմբագրական մասնատողովը, որ ես պահանջում էի: Խմբագիրը կալ—վերջացաւ: Խմբագիրն է ամէն բան:

Նա կարող է մինչև անգամ, ոչինչ չըհասկանալով գեղարւեստից, բանաստեղծութիւններ գրել, ջնջել, չինել, թէկուզ լինի ալ Շահազադինը, մերժել Թումանեանցի «Շունն ու կատուն», առարկելով, թէ բանաստեղծը չըպէտք է գեշիկ լեզուով գրի ալիպիսի բաներ—չոն ու կատուն... իսկ չետու՝ երբ ամենքը կըհաւանեն ալի նույն չունն ու կատուն, ինքն էլ ուրիշներից պակաս հասկացող չերեալու համար կսկսի նոր հիանալ և ուրանալ, որ իրան առաջարկած չի եղել:

Ներք է, որ ես խմբագիր է. նա կարող է խմբագրական խորհրդից հեռացնել մէկին, երբ որ տեսնի հակառակում են իւր գրածին և փաստերով ցուց տալիս իւր ետամնացութիւնը նույն իսկ իւր մասնագիտութեան մէջ:

Խմբագիրը կարող է և լեզուն աղաւաղել, ստեր գրել, մինչև որ ճարհատած աշխատակիցները ամսագիրը խախտաւորութիւնից ազատելու համար դաւեր սարքեն, սպառնալիքներ անեն (չիեցէք «Մուրճի խմբագրութիւնը վահափառի մօտ»):

13, Դուք բոլոր իմ շարժումները փառասիրութեամբ էք բացատրում:—ЧТО У КОГО БОЛИТЪ, ТОТЪ И О ТОМЪ ГОВОРИТЪ:

«կամաւոր զոհաբերողի անուն վաստակելու, ոսկու ուժով հալկական մամուլի մէջ դիրք ստեղծելու (!), թէկուզ Մուրճի գանձապահի դերով գրական շրջան ձարելու» (!!) ևալն:

Դուք հաւատացնում էք, թէ «պարզ է, որ հրատարակիչ կոչւելը շացրել էր իմ նախկին հօտարական ընկերոջը» (էջ 298). և միննոչն չօղւածում ինքեքեղ էք ասում, թէ «կոչւէր նա (ես) հրատարակիչ

թէ չէ, պաշտօնը մնում էր միևնույնը» (էջ 296):

Ասացէք, ի՞նչ էր Աստուծոյ, հրատարակչի կոչումով շլացածը աշուպիսի պաշտօն կը կապի...

Ինչպէս էք դուք միացնում ձեր այս երկու նախադասութիւնը?

Մի ուրիշ առակ պատմեմ—1891 թ. Մուրճի № 9-ում, դուք պ. Արասխանեանց, իմ մասին աշուպիսի բան էիք գրել:—

»Պր. Փիլիպպոս Վարդապետեանցին, — պարտք ենք համարում հրապարակով մեր խորին շնորհակալութիւնը լայտնել պ. Փիլիպպոս Վարդապետեանցին մի խոշոր զոհաբերութեան համար որ նա արել է Մուրճ ամսագրին: Պր. Վարդապետեանցը լանձն է առել դալ 1892 թվականից իւր վերալ առնել ամսագրի ելմտական մասը և հետեապէս իրանից ծածկել գոյանալիք որեւէ գեֆիցիտ որոշ տարեկանով ապահովելով ամսագրին խմբագրին և նոյն իսկ հրատարակչի զոյականալիք որեւէ զոհաբերութեան քաջութիւնը: Զուտ զոհաբերական մի աշուպիսի քաջութիւն համար մենք կրկին և կրկին լայտնում ենք մեր շնորհակալութիւնը պ. Փիլ. Վարդապետեանցին, որի ալք քաջութիւնը մէջ մենք հակած ենք տեսնելու աւելի քան անհատական համակրութիւնը: Ղէպի մեր գործունէութիւնը և ղէպի Մուրճը ընդհանրապէս: Թէև պ. Վարդապետեանցի լանձն առած պարտաւորութիւնները կը մնան նոյնը հաստատունա հրատարակչի կոչումով թէ ոչ, բայց մենք արդէն զիմեւ ենք ուր հարկն է թուլտութեան խնդիրքով որ պ. Վարդապետեանցը հաստատելի Մուրճի հրատարակչի կոչումով:»

Ես եկալ, չըթողցի «Մուրճերը» բաժանեն, իմ հաշով քանդել տեցի, հանել տեցի ալք գրած և աշուպէս ցրեցի ամսագիրը. սակաւ մի օրինակ մնում է ինձ մօտ աշուպէս սպառ:

Ի՞նչ կասէք փառամոլութիւնից արեցի ես ալք? Ընչի վրա էք հիմնում դուք ձեր կարծիքը, երբոր մարդկանց պարզ ընթացքի մէջ դնում էք աշուպիսի լեռին մտքեր:

14, Սակաւն ձեզ համար իսկի եղած է բարեխիղճ հետեողականութիւն? Երբոր ձեզ ձեռնտու է կասէք իսա՛ Առաքելիչ, երբ որ չէ՛ Առաքել իսալիչ:—

Ալժմ պնդում էք և հաւատացնում որ ես լոկ մի գանձապահ, մի խանգարող, աւելորդ մարդ էի Մուրճի խմբագրատանը, իսկ երբոր խմբագրատանն էի և հարկաւոր էր մէկի ղէմ ղէնք շարժել, իմ մասին գրում էիք 93 թվականին «Со мной согласенъ другъ мой по редакціи...»

Փառք Աստուծո՛ղ ալթօր էլ մնումն ձեր գրած ալտողերը պ. Ա. Բ. ին:

Ալժմ դուք բացականչում էք, թէ ես անշնորհ եմ գրում:

Հապա ինչո՞ւ էք փառել Մուրճի գրեթէ ամեն մի № ում իմ գրածները (որոնց տակ փառասիրութիւնից չեմ ստորագրել). ինչո՞ւ էիք թողնում որ ես Մուրճի մէջ մտցնեմ հինգ պարբերական բաժին: Ես և զրանցից երեքն ինքս վարեմ:

Եթէ ես անշնորհ էի գրում ուրեմն դուք վատ խմբագիր էիք, որ տպում էիք անշնորհ բաները, իսկ եթէ շնորհ ունէի, նորա համար էք տպել—ուրեմն հիմա սուտ էք ասում:

Սակաւն ես գրող հուշակեցում ձգտում չեմ ունեցել, — ալք բաժինները մտցրել և տարել եմ ուրիշներին օրինակ ցոյց տալու համար, և երբ լայտնել է մի գրող, ես տեղի եմ տւել լանձնելով նրան, թէն սա ինձ վերալ փող էր նստում: Օրինակ էք ուզում?

15, Իսկ եթէ փառասիրութիւն էք ուզում, ես ձեզ մի նմուշ պատմեմ, դուք տեսէք թէ ինչ բան է ալք հիւանդութիւնը:

1893 թ. երբոր Վեհափառ Վաթուղիկոսը Երուսաղէմից ժամանեց Թիֆլիզ, տեսնելով «Մուրճ»-ում ոչինչ չը կալ ալք մասին, մի աշխատակից ուզում էր ողջունել Վեհափառի գալուստը:—Ալք լաւ է, ասաց խմբագիրը, միտքը լսելուց չետու, ես մի աշուպիսի բան կը գրեմ: Եւ գրեց երկու երեսանոց մի առաջնորդող «Ողջուն խորամանկ հարկիկին», տակն էլ ստորագրեց ԱԻԵՏԻՖ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ Աշխատակիցները կարողացան համոզել պ. Ա. Արասխանեանցին, որ պէտք է խմբագրութիւնը—ալինքն «Մուրճ»-ը ողջունի և ոչ թէ մեն մենակ խմբագիրը, հանեցին Ա. Արասխանեանցը և գրեց «խմբագրութիւն», բայց ինչ... «Մուրճ»-ը դուրս եկաւ դարձեալ լիշեալ լուծած իտակ ստորագրած ԱԻԵՏԻՖ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ (որը միայն լուծածի վերջում աւելացրել էր, թէ «և մենք, և մեզ հետ մեր խմբագրութեան բոլոր գործակիցները, միախառնելով ժողովրդի ալք անկեղծ ձայներ և հետ գոչում ենք...»): Երբ հարցրին պ. խմբագրին, թէ ալք ինչ կըշտակի, խմբագիրը պատասխանում է—ախար ինչ անէի, «Մուրճ» ի ալք №-ում ոչ մի տեղ անուշ տպած չը կար!...

Ալք քեզ փառամոլի, չնչին փառամոլին ընտրու մի ղէպը:

16, Դուք գրում էք—«ընկերս փոխանակ ըստ պաշտանի դրամական մասը կառավարելու սկսեց մի անսպասելի դեր խաղացնել իրան, որից ես պէտք է արդէն պաշտպանէի և շարունակ պաշտպանէի» (էջ 300):

Դուք սուտ էք ասում, ինձ մեղադրելով իբրեւ թէ ես ձեզ վրալ լարձակում էի, ձեզ նեղն էի ձգում իբրեւ հրատարակիչ, որովհետեւ իբրեւ հրատարակիչ ես ձեր ծոցը մի աշուպիսի պաշտանագիր էի գրել, որի մէջ կապել էի իմ ձեռք ու ոտքը, զրկել էի ինձ ամեն խօսքից և իրաւունքից, որով դուք կարող էիք ինձ ամեն մի րոպէ խեղդել եթէ ես մի անգույն քալ անէի: Այստեղից պարզ է, որ ես ձեզ չէի կարող նեղը ձգել իբրեւ հրատարակիչ: Ուրեմն իբրեւ խմբագրական խորհրդի անգամ, իբրեւ աշխատակից էի՞ ձեզ նեղը ձգում? Այո, այս ճիշտ է, թէն դուք ալք չէք ասում: Բայց ո՞վ էր ինձ հրաւիրել խմբագրական խորհրդի—դուք: Ո՞վ էր ինձ ընդունել աշխատակից—դուք, եւ ես լարձակում էի ձեզ վրալ ամսագրի անկանոն լուստեսնելու հա:

մար, վատ որբագրութեան համար, խմբագրական ժողովի կարծիքները չը փարգեւում համար, անպէտք ու մերժեալ օգուածներ տպելու համար, գեղարուեստական գրական, նուրբեան մէջ ձեր բոբիկութեան համար, աշխատակիցներին հետ տմարդի վարւելու համար, բաժանորդներին հետ անքաղաքավարի վարւելու համար, և նաև, ասացէք, ցոյց տէք մի աշխատակից, թէ եկած գնացածներին, թէ եկած գնալականներին, որ արձակած և արձակելիս չըլինեն ձեզ վրայ... և դուք շարունակ ստիպւած էիք և պիտի ստիպւած էլ մնաք պաշտպանելու ձեր աշխատակիցներին դէմ:

Փաստեր էք ուզում... անուններ էք ուզում... դէպքեր էք ուզում...:

17, Դուք գրում էք (էջ 302—4) «վճռողական ընդհանր վկաների առաջ ես փառաւոր կերպով չալտարարեցի, որ ոչ մի դրամական բաւարարութիւն չեմ պահանջում (վահ) միայն տէք ինձ իմ Մուրճերը»:

Դուք, պարոն խմբագիր, շատ ողորմելի էիք ձեր փառաւոր դերասանութիւնով, դուք խօսմ լաւ գիտէք, թէ ինչպէս վկաններից մէկը (պ. Յ. Թ—ի տանը) ձեր բերանից հանեց այդ փառաւոր չալտարարութիւնը, առաջուց ձեզ ապահովացնելով որ ես չեմ ընդունիլ ձեր ջնորհը: Այդ ես գիտէի: Յիշում էք որ ձեր չալտարարութիւնից չետոյ մինչև որ ես, թէ և ոչ փառաւոր, չալտարարեցի, թէ ջնորհ չեմ ուզում, դուք տասը դոյն փոխեցիք և ձգում էիք ձեզ՝ այդ, ոչ ձեր հոգուն և զգացմունքներին՝ չարմար, բաւերը սովորեցնողի օձիքը և փսփսում «ախր... ախր էս ինչպէս եղաւ...»:

Եւ դեռ դուք, դուք (ով որ ձեզ լաւ է ճանաչում նա կը հասկանալ այս դուքն ինչ է նշանակում) վեր էք կենում մեծահոգութիւն, վեհանձնութիւն էք վերագրում ձեզ, իսկ իմ այս շատ պարզ քայլը գրականութեան օգտին, անւանում էք անխղճութիւն, աներեսութիւն, շահախնդրութիւն առանց ցանկութեան, խարդախութիւն, ևն:

Ինչո՞ւ համար

18, Որովհետև ձեզ հետ մի պալման եմ կապել, որի մէջ բոլոր իրաւունքները ձեզ է թողած, իսկ ինձ վրայ բարձած են բոլոր պարտաւորութիւնները, որոնցից մէկը եթէ չըկատարէի 20,000 թւի տուգանք էի տալու: մի պալմանագիր, որի մէջ ես երկու իրատուութիւններ տպարանը մտնել, գրաչարի հետ ծանօթանալու համար, ինչպէս դուք բացատրեցիք պ. Յ. Թ—ի տանը վկանների առաջ և Մուրճի օգուածներին առաջուց ծանօթանալ, իսկ հետաքրքրութեան բաւականութիւն, ինչպէս գրում էք (էջ 287) ալժմ:

Այս պալմանի տակ ես ստորագրել եմ և պարտաւորել կատարելու եթէ մինչև անգամ չը հաստատուեմ հրատարակիչ և Մուրճի

վերջին երեսը զարդարւած լինի միմիայն «Խմբագիր հրատարակիչ Ա.Ի.Տ.Ի.Ք. Ա.Ր.Ա.Ս.Ա.Ն.Ն.Ա.Ն.Յ.»:

Ի՞նչն էր ինձ ստիպում այս բանն անելու, հարցնում եմ, թէ կուզէ՞ք Մուրճից ստանալիք դրամական օգուտը, թէ ձեր մեծ ժողովրդականութեանն ու փառքին մասնակից լինելու տենչանքը?:

Հասկացողին բաւական է այս պալմանագիրը, նա կը ճանաչի աներեսին, խարդախին, ստախոսին, ևն, որ դուք վերագրում էք ինձ:

19, Մի բան էլ հարցնեմ ձեզ, երեսաւոր, անփառասէր, անխարդախ, բարեխիղճ, մեծահոգի և ալ մեծ լատիութիւնների տէր պարոն Արաստանեանց, — ինչո՞ւ էք վկանների շարքից հանել պ. Յովհաննէս Թումանեանցի անունը և միայն ինչեւ պ. Յ. Թ—ցի տանը: միայն տանը?

Ձը լինի թէ ձեզ համար անախորժ է նրա վկայութիւնը:

Բայց չէ՞ որ ամենից շատ բան նա գիտի այս գործի մասին: դուք իմ համակն ստանալուն պէս նրա մօտ էք վազել, նրան էիք ինձ մօտ միջնորդ ուղարկել, վերջապէս նա ձեր մօտիկ աշխատակիցն էր, ձեր բարեկամն էր... նա էլ խարդախ դուրս եկաւ!

Բայց որ մէկը վատ եղաւ!

Մեր վէճից չետոյ, երբոր բաժանման ժողովներում ձեզ լաւ ճանաչեցին, քանի աշխատակիցներ հեռացան ձեզանից, Ի՞նչ ասաց ձեր մասին ձեր աչի աշխատակիցը, որին դուք «միակ համոզած մուրճական» էիք անւանում: Ինչո՞ւ հեռացան հարցնում եմ ձեզ, նրանք բոլորը ձեր թշնամիներն էին, քանիսն եկան ու գնացին իմ օրով, նրանք էլ ձեր թշնամիներն էին? Ձեր վկայութեամբ դրանց անուշը լէ գէտն է և այդ լէգէտնում մի լաւը չը կան, հէնց բոլորն եկան ձեզ թշնամի դառնալու համար?

Այո, ձեր թշնամիներն են, ես կը վկայեմ, և Մուրճին մօտեցող ամեն մի ազնիւ անհատ պէտք է ձեր թշնամին լինի, եթէ նա Մուրճի բարեկամն է:

Պատասխանս վերջացնելով լանձնում եմ մեր դատը հայոց մամուլին և հայոց հասարակութեան դատաստանին, — թող ալժմ նրանք մեզ դատեն:

Փ. ՎԱՐԳԱՋԱՐԱՆՅ:



0021583

2001

2 0.13

4846

ՀՀ Ազգային գրադարան



NL0021583

